

นกนฐบกกานกนบ สนสกส

<u> ՅԻՐՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ</u>

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱԶՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԿԻՆ ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Յինգշաբթի, 10 Յուլիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մեջ ընդունեց այցելութիւնը բազմավաստակ դաստիարակ եւ ուսումնական համակարգիւ նուիրեալ ծառայող Տիկին Ալիս Պետրոսեանի։

Առաջնորդ Սրբազանը կարճատեւ հանդիպում մը ունեցաւ Տիկին Ա. Պետրոսեանի հետ, որ, ինչպես ծանօթ է, 31 տարի ծառայած է Կլենտեյլի հանրային վարժարաններու համակարգին մեջ, նախ իբրեւ ուսուցիչ, ապա նաեւ վարելով պատասխանատու պաշտօններ. ան վերջին շրջանին կրթական հարցերու ընդհանուր վարիչի օգնական էր (Assistant Superintendent of Educational Services), իսկ այժմ, ան Փասատինայի կրթական համակարգի փոխ ընդհանուր վարիչն է ուսումնական բաժանմունքին մեջ (Deputy Superintendent and Chief Academic Officer)։ Նշենք, որ ան նաեւ սերտ գործակից է Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող CASPSին, որուն հիմնադիր անդամներեն է։

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Տիկին Պետրոսեանի ծառայութիւնները, մանաւանդ հայ համայնքի զաւակներուն հետ անոր սերտ գործակցութիւնը, եւ մաղթեց, որ իր նոր պաշտօնին մեջ յարատեւե նոյն կամբով ու նուիրումով։

Յանդիպումեն փետք, Տիկին Ա. Պետրոսեան մասնակցեցաւ ՅՕՄի Շրջանային Ժողովի բացման նիստին, որ կայացաւ ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ։

PRELATE WELCOMES CHIEF ACADEMIC OFFICER OF THE PASADENA UNIFIED SCHOOL DISTRICT ALICE PETROSSIAN TO THE PRELACY

On the afternoon of Thursday, July 10th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Chief Academic Officer of the Pasadena Unified School District Mrs. Alice Petrossian.

The Prelate met with Mrs. Petrossian, who for 31 years has been serving in Glendale public schools as a teacher and later as Assistant Superintendent of Educational Services within the Glendale Unified School District. Most

recently, Mrs. Petrossian was appointed to the post of Chief Academic Officer of the Pasadena School District and also serves as Deputy Superintendent. She has also collaborated with the Prelacy through the Committee for Armenian Students in Public Schools (CASPS), of which she is a founding member.

The Prelate highly commended her service and dedication to our students and wished her success in her new position.

Following their meeting, Mrs. Petrossian participated in the opening session of the Armenian Relief Society 88th Regional Convention which took place at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.